ԽՐՈՆԻԿԸ

ԱՐԺԱՆԱՎԱՑԵԼ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Հայրենական մեծ պատերազմին և դերմանական ֆաշիզմի դեմ մղված պայքարին ցուցաբերած իր եռանդուն աշխատանքի համար Ամենայն Հայոց Հայրապետության Ազգընտիր Տեղակալ Ամենապատիվ Տ. Գևորգ Սրբազան Արքեպիսկոպոսը արժանացավ ՍՍՌ Միության Կառավարության առանձին ուշադրության և «Կովկասի պաշտպանության համար» մեդալին: Այս առթիվ «Սով. Հայաստան» թերթը հաղորդում է հետևյալը.

«Կովկասի պաշտպանության համար» մեդալի հանձնումը Ամենայն Հայոց կաթողիկոսի Տեղապահ արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանին.

Օրերս Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ ընկ. Մ. Պապյանը ՍՍՌ Միության Գերագույն Սովետի Նախագահության անունից հանձնեց «Կովկասի պաշտպանության համար» մեդալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահ Արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանին, որը պարգևատրվել է «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու և երկրի պաշտպանության ֆոնդի համար միջոցների հանգանակություն կազմակերպելու համար:

Ստանալով մեդալը, Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահ Արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանը դիմեց ընկ. Պապյանին հետևյալ խոսքերով.

«Հայ հոգևորականը պիտի հավատարիմ լինի իր Հայրենիքին, իր ժողովրդին, իր պետությանը: Այս ուղիով ես գնացել եմ սկզբից և պիտի գնամ ցմահ: Սովետական պետությունը դնահատելով իմ ճիշտ ուղին, արժանացրեց պարգևատրության: Ինձ համար թանկ է այս բարձր պարգևը:

«Հայրենական պատերազմի ամբողջ ընթացքում հայ եկեղեցին, հայ հոգևորականությունը և իմ հավատացյալ հոտը ոչինչ չեն խնայել ընդհանուր հաղթանակի համար: Հավատացած եղեք, որ այսուհետև ևս նրանք ոչինչ չեն խնայի երկրի վերաշինության ասպարեզում:

«Ամբողջ սրտով ցանկանում եմ մեր պետությանը ավելի մեծ նվաճումներ և հաջողություններ»:

Մեդալը հանձնելու ժամանակ ներկա էին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության քարտուղար ընկ. Հ. Գալստյանը և Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետին կից հայ եկեղեցու գործերի Խորհրդի նախագահ ընկ. Ս. Ն. Հովհաննիսյանը:

(«Սովետ. Հայաստան» 5 հունիսի, 1945 թ., № 112 (7365).

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԺՈՂՈՎԻՆ ԺԱՄԱՆԱԿ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՈՒ ՀՅՈՒՐԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏՈՒՄ

Հունիսի 26-ին Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետում Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետի Նախագահի Տեղակալ ընկ. Ս. Կ. Կարապետյանը ընդունեց արտասահմանյան երկրների հայկական դաղութներից էջմիածին Հայ Եկեղեցու Ժողովին ժամանած պատգամավորներին ու աշխարհական հյուրերին:

Ընդունելությանը ներկա էին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահ ընկ. Սիմակ Սահակյանը, Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետի Նախագահի Տեղակալ ընկ. Հ.